Ճշմարտության, արդարության, հատուցման և չկրկնվելու երաշխիքների խթանման հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլի

Նախնական դիտարկումներ 2023թ.-ի նոյեմբերի 16-ից 24-ը Հայաստան կատարած պաշտոնական այցից

Երևան, 24 նոյեմբերի 2023թ.

2023 թվականի նոյեմբերի 16-ից 24-ը ես պաշտոնական այցով եղել եմ Հայաստանում: Կուզենայի շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին այցի ընթացքում դրսևորած բաց համագործակցության համար: Շնորհակալ եմ նաև երկրում ՄԱԿ-ի ներկայացուցչությանը՝ այցից առաջ և ընթացքում իմ թիմին ցուցաբերած աջակցության համար: Եղել եմ Երևանում, Ջերմուկում ու Եղեգիսում և Սյունիքի մարզում, հնարավորություն եմ ունեցել այցեր կատարելու փախստականների ճամբարներ, հակամարտության տարածքներ և մարդու իրավունքների խախտումներին նվիրված հուշահամալիրներ: Հանդիպումներ եմ ունեցել տուժածների և փրկվածների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական համայնքի ներկայացուցիչների, լրագրողների և գիտակ փորձագետների հետ:

Հայաստան կատարած իմ այցի նպատակն էր գնահատել ճշմարտության, արդարության, հատուցման, մոռացության չտալու և չկրկնվելու երաշխիքների առնչությամբ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված հակամարտության, ավտոկրտատիայի կամ պետական բռնաճնշման իրավիճակներում մարդու իրավունքների լուրջ խախտումների հետևանքներին՝ ձգտելով ավելի լավ պատկերացում կազմել իրականացված տարբեր նախաձեռնությունների վերաբերյալ, բացահայտել լավ փորձը, բացթողումներն ու թերությունները և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Այցի ընթացքում հանդիպել եմ Արտաքին գործերի նախարարության, Արդարադատության նախարարության, Անվտանգության խորհրդի, Ազգային անվտանգության ծառայության, Ներքին գործերի նախարարության, Պաշտպանության նախարարության, Գերիների, պատանդների և անհետ կորածների հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային խմբի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահության նախարարության, Միջազգային իրավական հարցերով ՀՀ

ներկայացուցչության, Գլխավոր դատախազության, Սահմանադրական դատարանի, Բարձրագույն դատական խորհրդի, Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերով մշտական հանձնաժողովի, Պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի, Աշխատանքի և սոցիալական հարցերով մշտական հանձնաժողովի ներկայացուցիչների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի հետ:

Հայ հասարակությունը 20-րդ դարում ենթարկվել է մարդու իրավունքների լրջագույն խախտումների, այդ թվում՝ առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած ցեղասպանությունը. բռնի տեղահանումները, էթնիկ զտումներն ու բռնաճնշումները խորհրդային իշխանության ներքո. Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում միջազգային իրավունքով սահմանված հանցագործությունները. ինչպես նաև կամայական կալանավորումը և ուժի չափից ավելի կիրառումը բողոքի ցույցերի ժամանակ, զինված ուժերում կասկածելի մահվան դեպքերը և իրավապահների կողմից 1991 թվականից ի վեր իրագործված խոշտանգումները: Նշված ժամանակահատվածում տեղի են ունեցել նաև սեփականության և ընտրական իրավունքների լայնածավալ խախտման դեպքեր: Հետկոնֆլիկտային, հետավտորիտար և հետավտոկրատ գործընթացները պետք է ուղեկցվեն ճշմարտության որոնման, քրեական պատասխանատվության, վնասի հատուցման, մոռացության չտալու միջոցառումներով, ինչպես նաև ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումներով, որոնք ուղղված կլինեն այդ խախտումների հետևանքները վերացնելուն, դրանց կրկնումը կանխելուն և ժողովրդավար ու խաղաղ ապագայի հիմքերը դնելուն: Իմ այցի ընթացքում ես գնահատել եմ անցումային արդարադատության այս հինգ ոլորտներում գրանցած առաջընթացը: Այս առնչությամբ ես կներկայացնեմ իմ նախնական դիտարկումները և հետագա գործընթացների մասին առաջարկությունները: Իմ այցի մանրամասն զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին կներկայացվի 2024 թվականի սեպտեմբերին:

<u>Ճշմարտության որոնում</u>

Հայաստանը հետ է մնացել ճշմարտության որոնման մասնագիտացված ինքնավար մեխանիզմներ ստեղծելու իր գործում՝ հետաքննելու և արձանագրելու մարդու իրավունքների համակարգային խախտումները, որոնք տեղի են ունեցել այդ անհանգիստ տարիներին: Չեն հիմնվել ճշմարտության որոնման մեխանիզմներ խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած խախտումները, հակամարտության որոշ դրվագները և 1991 թվականից ի վեր պետական չարաշահումների դեպքերն ուսումնասիրելու համար: Հակամարտության և պետական չարաշահումների վերաբերյալ որոշ քննություններ իրականացրել է Ազգային ժողովը (ԱԺ):

2009 թվականին Ազգային ժողովում ստեղծվեց «Մարտի 1-ի հանձնաժողով»-ը, որը կոչված էր ուսումնասիրելու 2008 թ.-ի մարտի 1-ին և 2-ին ընտրակեղծիքների դեմ բողոքի ցույցերից հետո տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները (ներառյալ սպանությունները, ուժի չափից ավելի կիրառումը, հարյուրավոր ցուցարարների կամայական կալանավորումն ու քրեականացումը): Հանձնաժողովն իր եզրակացություններով հանդերձ զեկույց ներկայացրեց ԱԺ-ին: Այդուհանդերձ, այն չբացահայտեց հիշյալ դեպքերի ընթացքում 10 մարդու սպանության մեղավորներին:

Հակամարտության առնչությամբ Ազգային ժողովը ձևավորել է քննիչ հանձնաժողովներ՝ 2016 թվականի ապրիլյան 4-օրյա և 2020 թվականի 44-օրյա պատերազմների դեպքերն ուսումնասիրելու համար: Առաջինի աշխատանքն ու բացահայտումները մասամբ գաղտնի են, իսկ երկրորդինը՝ դեռ ընթացքում է:

2018 թվականին կառավարությունն ընդունեց դատահիրավական բարեփոխումների ռազմավարությունը և 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը, որում սահմանեց անկախ Փաստահավաք հանձնաժողովի ստեղծումը՝ ուսումնասիրելու մարդու իրավունքների խախտումները 1991-ից 2018 թվականներին. մի ժամանակաշրջան, որը շատերի կողմից բնութագրվել է որպես ավտոկրատիա: Այս հանձնաժողովը կառավարության ռազմավարության մեջ անցումային արդարադատության միակ նախատեսված կառույցն էր: Ակնկալվում էր, որ հանձնաժողովը կուսումնասիրեր այս ընթացքում տեղի ունեցած համակարգային խախտումները, ինչպիսիք են «ազգային շահերից բխող» օտարումները (իրականացված 2000-ականներից ի վեր), զինվորականների մահերը հակամարտությունից կամ մարտերից դուրս, ընտրական իրավունքների խախտումները կամ կեղծիքները և քաղաքական հետապնդումները: Իրավական և դատահիրավական բարեփոխումների ռազմավարությունը և 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը վերահաստատել են այս Հանձնաժողովի ստեղծման հանձնառությունը: Սակայն, 2023 թվականին կառավարության կողմից մշակված օրինագիծը, ըստ երևույթին, էապես թուլացրել է անցումային արդարադատության այս մեխանիզմը՝ փոխարենն առաջարկելով ստեղծել փորձագիտական խումբ Հայաստանի Հանրային խորհրդի ներքո, որը ենթադրաբար անորոշ մանդատով, անբավարար լիազորություններով և կամավոր անդամությամբ մի հաստատություն է:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով անհետ կորածների որոնմանը, որոնց թիվը հակամարտության տարբեր փուլերում միասին կազմում է շուրջ 5000 մարդ, իշխանությունների կողմից առաջնահերթություն չի տրվել վերջին տասնամյակների ընթացքում: 2020 և 2023 թվականների վերջին զարգացումներից հետո կորցնելով այդ տարածքներ մուտք գործելու հնարավորությունը՝ որոնման գործողությունը, ցավոք, Հայաստանի իշխանությունների համար ավելի անհասանելի դարձավ: Անցնող ժամանակը ևս խոչընդոտում է վկաների ցուցմունքներին և իրենց կյանքը կորցրած անհետ կորածների թաղման վայրերի մասին տեղեկատվության հասանելիությանը: Այս հարցում հայ և ադրբեջանցի գործընկերների համագործակցությունը թերի է եղել և պետք է շտապ ընդլայնվի:

<u>Արդարություն</u>

2022 թվականին Հայաստանի Քրեական օրենսգրքում բարեփոխում կատարվեց՝ դրանում առկա միջազգային հանցագործությունների ցանկը, այդ թվում ռազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները, ցեղասպանությունը և խոշտանգումները, միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Բարեփոխումը սահմանեց նաև այդ հանցագործությունների համար համաներումների և վաղեմության ժամկետների կիրառման արգելքը: 2023 թվականի հոկտեմբերին Հայաստանը վավերացրեց Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը, որն ուժի մեջ կմտնի 2024

թվականի փետրվարին: Ես ողջունում եմ Հայաստանի կառավարության՝ այս կարևոր օրենսդրական առաջընթացի ուղղությամբ կատարված քայլը:

Չնայած այս բարելավմանը, պետական պաշտոնյաների կողմից մարդու իրավունքների ոտնահարումների համար քրեական պատասխանատվություն չի իրականացվել և բավարար չափով կամ ինչպես հարկն է հետևողականություն չի դրսևորվել: Նախկին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ), որին հանձնարարվել էր հետաքննել պետական պաշտոնյաների կողմից թույլ տված խախտումները, իրականում չի հետաքննել 2015 և 2016 թվականներին խաղաղ ցուցարարների և լրագրողների նկատմամբ ոստիկանական բռնությունները՝ պնդելով, որ իրենք չեն կարողացել հայտնաբերել ենթադրյալ հանցագործներին: 2018 թվականին ՀՔԾ-ը վերսկսել է 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի հետաքննությունը՝ մեղադրանք առաջադրելով նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին, որը սակայն, ի վերջո, մերժվել է Քրեական դատարանի կողմից՝ հակասահմանադրական համարելով Քրեական օրենսգրքի «սահմանադրական կարգը տապալելու» մասին հոդվածը, որի հիմքով առաջադրվել էր մեղադրանքը: Հավաքների համատեքստում ուժի անհամաչափ կիրառման և ուրիշ չարաշահումների բազմաթիվ այլ դեպքերի առթիվ արդյունավետ քրեական հետաքննություն չի եղել: Մտահոգիչ է, որ հավաքների համատեքստում ոստիկանության ներկայիս գործելաոճը, ըստ տեղեկությունների, գրեթե չի փոխվել:

Ոստիկանության կողմից խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր են արձանագրվել Հայաստանում, որոնք շարունակվում են մինչ օրս[1]: Չնայած խոշտանգումը որպես հանցակազմ քրեականացվել է 2015 թվականին, տուժողի հայցերը մերժվել են ներպետական դատարանների կողմից վաղեմության ժամկետների կիրառմամբ այնքան ժամանակ, մինչև 2022 թվականի Քրեական օրենսգրքով դրանց կիրառումը օրենքից դուրս է մղվել: Բացի այդ, մինչև 2015 թվականը կատարված խոշտանգումների դեպքերը քրեական հետապնդման են ենթարկվել «պաշտոնեական լիազորությունների չարաշահում» հոդվածով, անգամ այն բանից հետո, երբ խոշտանգումը որպես հանցակազմ մտցվել է քրեական օրենսգիրք: Քաղաքացիական հասարակության տեղեկություններով չնայած օրենսդրական առաջընթացին, խոշտանգումների դեպքերի քրեական հետաքննությունը հաճախ փակվում է այն հիմքով, որ հանցագործություն չի կատարվել կամ կասեցվում է կասկածյալի ինքնության բացահայտումը ձախողելու պատճառով[2]: Ըստ հաղորդագրության խոշտանգումների մեղադրանքով առաջին դատավճիռը կայացվել է 2022 թվականի մարտին:

Բազմաթիվ զրուցակիցներ մտահոգություն են հայտնել զինված ուժերի ոչ մարտական գործողությունների արդյունքում տեղի ունեցող մահված դեպքերի և դրանց հանդեպ պատասխանատվության բացակայության վերաբերյալ: Այս խախտումների հետաքննությունն անարդյունավետ է քրեական արդարադատության համակարգում արձանագրված դիմադրության պատճառով, որտեղ ենթադրաբար կոռումպացված անդամների ստուգում չի իրականացվել: 2020-2021 թվականներին վարչապետի

[1] https://www.hrw.org/world-report/2023/country-chapters/armenia#1c2c8f

[2] Ibidem

նախաձեռնությամբ կառավարության և տուժած ընտանիքների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ է ստեղծվել այդ հետաքննությունները գնահատելու համար: Խումբը պատրաստել է համապարփակ զեկույցներ հինգ ընտրված դեպքերի վերաբերյալ, որտեղ արձանագրվել են պատշաճ դատավարության խախտումներ: Արդյունքում մի քանի քրեական գործեր վերաբացվել են, մինչդեռ մյուսները մնում են առաջ չեն ընթանում:

Ներպետական դատարանները չեն պաշտպանել գույքի օտարման տուժածների փոխհատուցման իրավունքները: Օտարման գործերը պարբերաբար ենթարկվում են վաղեմության ժամկետի կիրառման, իսկ դատարաններ հայցեր ներկայացրած տուժողները փոխհատուցում չեն ստանում, բացառությամբ 20 դեպքի, որոնցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ է կայացրել հօգուտ տուժողի: 2023 թվականի նոյեմբերին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, համաձայն որի 2001-ից 2006 թվականներին տեղի ունեցած օտարման գործերի նկատմամբ արգելվում է վաղեմության ժամկետների կիրառումը, նաև սահմանեց, որ խորհրդարանը չի կարող հետագայում այդ գործերի համար նման սահմանափակումներ սահմանող օրենսդրություն ընդունել: Սա շատ ողջունելի զարգացում է:

Հատուցում

1994 թվականին Հայաստանի Հանրապետությունն ընդունեց «Բռնադատվածների մասին» օրենքը: Այն վերաբերում էր նրանց, ովքեր նախկին խորհրդային տարիներին, խորհրդային տարածքում և քաղաքական դրդապատճառներից ելնելով. ա) դատապարտվել են 1961 թվականի Քրեական օրենսգրքի և նախկին օրենսգրքերի որոշ հոդվածներով և հետագայում արդարացվել, բ) քրեական պատասխանատվության են ենթարկվել արտադատարանական կարգով, գ) անօրինական կարգով ենթարկվել են բժշկական բնույթի հարկադրական միջոցների, դ) արտաքսվել են նախկին ԽՍՀՄ տարածքից կամ զրկվել քաղաքացիությունից, կամ ե) ազատազրկվել, աքսորվել կամ արտաքսվել են որպես բռնադատվածի ընտանիքի անդամ: Օրենքը նախատեսում էր տուժողներին հատուցում, ներառյալ քաղաքացիության, կոչումների, աստիճանների, կենսաթոշակների վերականգնում, հողային սեփականության տրամադրում անհատական բնակելի տների կառուցման նպատակով, երկարաժամկետ շինարարություն արտոնյալ պայմաններով, բնակարանների սեփականաշնորհման հետ կապված վճարներից ազատում, բռնագրավված գույքի և բռնադատված անձի չվճարված աշխատավարձի համար միանվագ դրամական փոխհատուցում: Խորհրդային բռնաճնշումների զոհերի այս կարգավիճակը ճանաչվեց, և նրանք փոխհատուցվեցին այս սխեմայի համաձայն: Օրենքը ընդլայնելու մասին քաղաքացիական հասարակության օրենսդրական առաջարկն այն մասին, որ այն տարածվի նաև ժողովրդավարական ժամանակներում բռնաճնշումների զոհերի վրա, այդպես էլ չընդունվեց:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին օրենքը (1998 թ.) և 245N օրենքը (2016 թ.) նախատեսում են փոխհատուցում հակամարտության ընթացքում զոհված կամ անաշխատունակ դարձած զինծառայողներին: Ըստ կառավարության տրամադրած տեղեկատվության, հակամարտությունից տուժած քաղաքացիական անձինք և նրանց ընտանիքները կառավարության որոշումների համաձայն ստանում են փոխհատուցում: Տուժողները

նշել են, որ կառավարության կողմից բավարար հոգեբանական աջակցություն չի տրամադրվել:

2019 թվականին օրենք է ընդունվել փոխհատուցում տրամադրել 2008 թվականի մարտի 1-ի դեպքերից տուժածներին և նրանց ընտանիքներին, որոնց առողջության կամ կյանքի վրա նշված դեպքերը լուրջ ազդեցություն են ունեցել: Տուժածներին և ընտանիքի անդամներին տրվել է դրամական փոխհատուցում:

Այս օրենքներից բացի Հայաստանը չի ընդունել հատուկ օրենսդրություն՝ մարդու իրավունքների այլ խախտումների զոհերին և տուժածներին փոխհատուցում տրամադրելու մասին: Այնուամենայնիվ, տուժողները կարող են հայց ներկայացնել գոյություն ունեցող այլ ընդհանուր նորմերի, օրինակ, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, որը փոխհատուցում է նախատեսում մարդու իրավունքների այնպիսի լուրջ խախտումների համար, ինչպիսիք են կյանքի կորուստը, խոշտանգումները և անձնական ազատության կորուստը, ինչպես նաև ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի, որը վարչական մարմինների պատճառած վնասից տուժածներին հատուցման իրավունք է տալիս: Սակայն, տուժողների հայցերի ներկայացման ժամկետը սահմանափակվում է մինչև 3 տարի, ինչը սահմանափակում է տուժողների՝ փոխհատուցման իրավունքների հասանելիությունը, իսկ փոխհատուցումը միայն նյութական է և չի ներառում ռեաբիլիտացիան:

«Խոշտանգումներից տուժած անձանց հոգեբանական ծառայություններից օգտվելու կարգը և պայմանները սահմանելու մասին» կառավարության 2017 թվականի որոշմամբ խոշտանգումներից տուժած անձինք ունեն վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունք: Այն ներառում է անվճար հոգեբանական և իրավաբանական ծառայություններ, որոնք տրամադրվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից՝ համաձայնեցվելով Արդարադատության նախարարության հետ:

Ինչ վերաբերում է սատիսֆակցիային, ապա Վարչապետը 2019 թ.-ին Երևանում տեղի ունեցած հիշատակի հանրային միջոցառման ժամանակ հրապարակավ ներողություն խնդրեց մարտի 1-ի իրադարձությունների քաղաքական հետապնդման և սպանությունների տուժածներից: Ես տեղեկություն չեմ ստացել այն մասին, թե անցյալում՝ պետական պաշտոնյաների կողմից իրականացված իրավունքների խախտումների համար հրապարակային ներողություն հայցելու այլ դեպքեր եղել են, թե ոչ :

Հիշատակում

Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը նվիրված է «թուրքական կառավարության ձեռքով իրագործված 20-րդ դարի առաջին ցեղասպանության ժամանակ զոհված մեկ ու կես միլիոն հայերի հիշատակին»[3]: Համալիրը կազմված է 1967 թվականին տեղադրված

[3] http://www.genocide-museum.am/eng/Description_and_history.php

Ցեղասպանության հուշարձանից և 1995 թվականին հիմնադրված Ծիծեռնակաբերդի թանգարան-ինստիտուտից: Համալիրի ներսում քաղաքացիական հասարակության անդամները կանգնեցրել են հուշահամալիրներ՝ ի հիշատակ Բաքվի, Սումգայիթի և Կիրովաբադի ջարդերի և Լեռնային Ղարաբաղի հակամարտության զոհերի, որոնք պատշաճ կերպով պահպանվում են համալիրի ղեկավարության կողմից: Համալիրը մոռացության չտալու ջանքերի օրինակելի մոդել է, որը կարող է և պետք է կրկնել այլ ոլորտներում: Հայաստանը ամեն տարի նշում է ցեղասպանության զոհերի հիշատակը և ճանաչում ցեղասպանության զոհերին այլուր:

Հունիսի 14-ը հայտարարվել է բռնաճնշումների զոհերի հիշատակի օր: Կասկադ հուշահամալիրը նվիրված է խորհրդային տարիներին քաղաքական բռնաճնշումների ենթարկված, տեղահանված և սպանված հայերին: Այն կառուցվել է 1980-ականներին և բացվել կառավարության կողմից 2008 թվականին: Հուշարձանը պահպանվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից՝ առանց պետական աջակցության և բացվում է տարին մեկ անգամ՝ հունիսի 14-ին՝ ի հիշատակ բռնաճնշումների զոհերի: Հիշատակի միջոցառումն իրականացվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից՝ առանց կառավարության աջակցության կամ մասնակցության: Հուշարձանը գտնվում է Երևանի Կասկադ համալիրում և տեղադրված է 1967 թվականին Խորհրդային Հայաստանի 50-ամյա հիշատակի առիթով կանգնեցված կոթողի կողքին:

2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը բացվել է 2023 թվականին կառավարության կողմից՝ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ վարչապետի և նախագահի մասնակցությամբ, որտեղ նրանք աջակցություն են հայտնել զոհերին և նրանց ընտանիքներին և նշել, որ ընտրակեղծիքները և ոստիկանական բռնությունները այլևս երբեք չպետք է կրկնվեն:

Հայաստանում պաշտոնապես նշվում է անհետ կորածների օրը, դրվել է հուշարձան, տեղի են ունեցել հիշատակի պաշտոնական արարողություններ: Այդ օրը զոհերի ընտանիքների կողմից կազմակերպված հիշատակման միջոցառումներին իշխանությունները միշտ չէ, որ մասնակցել են:

Կառավարության տեղեկություններով դպրոցական ուսումնական ծրագրերն ու ձեռնարկները ներառում են դասեր մարդու իրավունքների և խաղաղության մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև անդրադառնում են նախկինում կատարված մարդու իրավունքների լուրջ խախտումներին, ինչպիսիք են Հայոց ցեղասպանությունը, Ստալինյան բռնաճնշումները, Բաքվի, Սումգայիթի և Կիրովաբադի ջարդերը (*պոգրոմները*) և Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում կատարված խախտումները: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նկատել են, որ խորհրդային իշխանության տարիներին հայերի հանդեպ իրականացված ոտնձգությունների վերաբերյալ ուսուցումը բավարար չէ, բացառությամբ ստալինյան բռնաճնշումների և տեղահանության դեպքերի: 1991 թվականից հետո իրականացված պետական չարաշահումների մասին տեղեկատվությունը ևս անբավարար է: Հարկ է նշել

նաև Լեռնային Ղարաբաղի համատեքստում կատարված խախտումների նկատմամբ համապարփակ մոտեցման բացակայությունը: Գործող կառավարությունը պարտավորվել է վերանայել դասագրքերում ներկայացված բովանդակությունը մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ և ապահովել «իրադարձությունների օբյեկտիվ մեկնաբանում»: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակությունը մտահոգված է այս խնդրի վերաբերյալ դպրոցական տեքստերում հնարավոր քաղաքական շահարկումների առնչությամբ:

Հաշվի առնելով այս իրադարձություններից մի քանիսին ուղղված ճշմարտության որոնման և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը, որոնք կրթական գործիքների համար տեղեկատվության բնական և ամենահավաստի աղբյուրը կարող էին լինել՝ կարևոր է, որ անցյալում մարդու իրավունքների լուրջ խախտումների մասին պատմության դասագրքերը հիմնված լինեն վերանայվեն՝ հիմնվելով օբյեկտիվ տեղեկատվության վրա, որը թելադրված չէ քաղաքական կամ այլ շահերով:

<u>Զկրկնվելու երաշխիքներ</u>

Անվտանգության ոլորտի բարեփոխում

Ես տեղեկացա կառավարության կողմից իրականացվող վերջին միջոցառումների մասին՝ ուղղված անվտանգության ոլորտի հաստատությունների բարեփոխմանը՝ որպես 2020 թվականի ինստիտուցիոնալ բարեփոխումների լայն փաթեթի մի մաս: Կառավարության տրամադրած տեղեկության համաձայն անվտանգության ոլորտի բարեփոխումները նպատակ ունեն վերափոխել ոստիկանության ուժերը՝ պաշտպանական ուժային կառույցից վերածելով կանխարգելիչ կողմնորոշում ունեցող ուժային կառույցի[4]: Բարեփոխումը ենթադրում էր Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ստեղծում և ոստիկանական ուժերի իրավասության փոխանցում վարչապետից, ում ենթակայությամբ գործում էին նախկինում, Ներքին գործերի նախարարությանը: Այն նաև ներառում է նոր պարեկային ոստիկանության ստեղծում՝ քաղաքացիական կարգը պահպանելու և արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար, ինչպես նաև նոր Ազգային գվարդիայի հիմնում, որը բաղկացած կլինի ոստիկանական ուժերից, անվտանգության աշխատակիցներից և վկաների պաշտպանության աշխատակիցներից: Վերջինիս նորընտիր անդամները պետք է վերապատրաստվեն և մոնիթորինգ անցնեն: Բացի այդ, բարեփոխումը ենթադրում է ոստիկանության քրեական և համայնքային ծառայությունների գործառույթների և կառավարման մոդելի վերակազմավորում: Բարեփոխման համաձայն՝ ներքին անվտանգության և կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովը, որը ներքին վերահսկողական մարմին է և հետաքննում է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների և կարգապահության խախտումները և ստուգում նրանց անվտանգության տեսախցիկները, ոստիկանության իրավասությունից անցել է Ներքին գործերի նախարարության իրավասություն՝ հսկողությունը բարելավելու նպատակով:

[4] https://uhri.ohchr.org/en/document/c480b852-2b57-4e53-ad7f-a46ec6e3e32d

Բարեփոխումը նաև ենթադրում է ոստիկանության հավաստագրման գործընթաց, ըստ որի՝ բոլոր ոստիկանները պետք է հաջորդ 3 տարվա ընթացքում իրենց գիտելիքների, կարգապահության և վարքագծի ստուգում անցնեն՝ որպես ուժային կառույցում մնալու նախապայման: Հավաստագրումը կիրականացվի Գնահատող հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է նախարարությունների, խորհրդարանի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ողջունել են ոստիկանության բարեփոխումները, սակայն նշել, որ դրանք հիմնականում մասնակի ջանքեր են, այլ ոչ թե համակարգային փոփոխություններ:

Ինչ վերաբերում է քրեակատարողական ծառայությանը, ապա արդարադատության նախարարի հրամանով 2005 թվականին ստեղծվել է հանրային բանտերի մշտադիտարկման խումբ՝ ապահովելու Հայաստանի քրեակատարողական հիմնարկների հանրային վերահսկողությունը և բանտարկյալների իրավունքների պաշտպանությունը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ քրեակատարողական հիմնարկներ անսահմանափակ մուտքի հնարավորությամբ:

Ինչ վերաբերում է զինված ուժերին, ապա 2012 թ.-ին ընդունվել է ՀՀ ԶՈՒ Կարգապահական կանոնագրքի մասին օրենքը: 2014 թ.-ին ՀՀ Քննչական կոմիտեի կազմում ստեղծվել է զինվորական քննչական վարչություն, որի անդամներին նշանակում է վարչապետը զինվորականների կողմից կատարված հանցագործությունները հետաքննելու մանդատով: 2015 թվականին Պաշտպանության նախարարությունում ստեղծվել է Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնը (ՄԻԲԿԿ), որը ներդնում է մարդու իրավունքների և բարյացկամության վրա խարսխված մշակույթ: 2017 թվականի հունվարին ՄԻԲԿ կենտրոնի ենթակայությամբ գործարկվել է ՊՆ արագ արձագանքման ծառայությունը (թեժ գիծ): Կառավարության տրամադրած տեղեկության համաձայն զինված ուժերը 2020 թվականից ենթարկվել են բարեփոխումների՝ թափանցիկության բարձրացման, կոռուպցիայի կանխարգելման, առաջադրանքների և կարողությունների վերանայման և ժողովրդավարական վերահսկողության բարելավման նպատակով:

Խորհրդարանի և վարչապետի կողմից հաստատվել են անվտանգության ոլորտի բարեփոխումները վերահսկելու և քննարկելու մեխանիզմներ՝ խորհրդակցելով նաև քաղաքացիական հասարակության և օրենսդիրների հետ, սակայն նրանց աշխատանքը տուժում է քաղաքական նշանակումների կամ քաղաքական անգործության պատճառով:

Չնայած այս մեկնարկային բարեփոխումներին, ինձ մտահոգում են Հայաստանի անվտանգության և զինված ուժերի կողմից իրականացվող մարդու իրավունքների շարունակական խախտումները, ներառյալ խոշտանգումները, ցույցերի ժամանակ ուժի չափից ավելի կիրառումը և մարտական իրավիճակներից դուրս զինվորների կասկածելի մահվան դեպքերը: Այս խախտումների հետաքննության և պատժամիջոցների բացակայությունը չի նպաստում դրանց կրկնումը կանխելուն:

Դատական բարեփոխում

Խորհրդային Միությունից անկախանալուց և 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո ընդունվեց դատահիրավական բարեփոխումների առաջին փաթեթը՝ խորհրդային դատական համակարգը նոր դատական մարմիններով և օրենսդրությամբ փոխարինելու նպատակով: 2001թ.-ին ՀՀ Եվրոպայի խորհուրդ մուտք գործելուն զուգահեռ իրականացվեցին հետագա իրավական բարեփոխումներ՝ երկրի դատական համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու համար: Այդ նպատակով տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների և ներդնողների կողմից տրամադրվեց տեխնիկական և ֆինանսական աջակցություն: 2009-2011 և 2012-2016 թվականներին ընդունվեցին դատահիրավական բարեփոխումների ռազմավարություններ՝ ուղղված արդյունավետ և անկախ դատահիրավական համակարգի կայացմանը:

Թավշյա հեղափոխությունը նոր բարեփոխումներ բերեց դատական համակարգ, որը տեղական և միջազգային դերակատարների կողմից դեռևս լայնորեն ընկալվում էր որպես քաղաքական շահերի և կոռուպցիայի հետևանքները կրող կառույց, չնայած նախկին բարեփոխումներին: Հայաստանի Հանրապետության դատահիրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունն ընդունվեց 2019 թվականին՝ դատարանների արդյունավետության բարձրացման, դատական համակարգի հանրային հաշվետվողականության բարձրացման, կոռուպցիայի ու հովանավորչության վերացման հստակ նպատակի համար: Այս ռազմավարության շրջանակներում ընդունվել են քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքեր: Ի լրումն, կառավարությունը սահմանել է բարեվարքության ստուգման ընթացակարգ դատավորների և դատախազների ընտրության և առաջխաղացման համար: 2019 թվականին ստեղծվել է Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես ինքնակառավարվող մարմին, որի նպատակն է ապահովել դատավորների անկախությունն ու բարեվարքությունը, ինչպես սահմանված է 2015 թվականի Սահմանադրությամբ: Բազմաթիվ զրուցակիցներ նշել են, որ առաջընթացը կանգ է առել 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից հետո: 2021 թվականին Եվրախորհրդի վեհաժողովը նշել է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակի և հանրային այն ընկալման մասին, որ համակարգը խիստ կոռումպացված է[5]: ՏՀՁԿ-ի 2022 թվականի զեկույցում նշվում էր դատախազների ինքնավարությունը պաշտպանող դատախազական մարմնի բացակայության, դատախազների՝ ըստ հայեցողության, արժանիքների վրա չհիմնված ընտրության և առաջխաղացման, ինչպես նաև ոլորտային ղեկավարների կողմից գործերի անկանոն բաշխման մասին: Այն նաև նշել է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության անբավարար թափանցիկության և խորհրդարանի կողմից դրա 5 անդամների

[5] https://assembly.coe.int/LifeRay/MON/Pdf/TextesProvisoires/2021/20211217-ArmeniaInstitutions-EN.pdf, p. 4

ընտրության հարցում արժանիքների վրա հիմնված չափանիշների բացակայության մասին[6]:

2022-2026 թվականների դատահիրավական բարեփոխումների ռազմավարությունը մշակվել է, սակայն դեռ պետք է իրականացվի: Հակակոռուպցիոն և ընտրական բարեփոխումներին կանդրադառնամ իմ վերջնական զեկույցում:

Ամփոփիչ դիտարկումներ

Այն վարչակազմերը, որոնք կառավարել են Հայաստանը 1991 թվականին ԽՍՀՄ-ից անկախանալուց ի վեր, իրականացրել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված խորհրդային իշխանության, ավտոկրատ կառավարությունների և հակամարտության համատեքստում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների հետևանքների վերացման ուղղությամբ: Թեև այս միջոցառումները չեն ներառվել անցումային արդարադատության գործընթացում և պաշտոնապես չեն դարձել նման օրակարգի մաս, շատերն ուղղված են բռնաճնշող կամ ավտոկրատ ռեժիմների ժառանգությունը ժողովրդավարական համախմբման վերափոխելուն, հակամարտության ընթացքում հայ զինվորների կամ քաղաքացիական հասարակության իրավունքների խախտումները քննելուն և նրանց կրած վնասները փոխհատուցելուն:

Ճշմարտության որոնման, քրեական արդարադատության, մարդու իրավունքների նախկին խախտումների հետևանքով առաջացած վնասի փոխհատուցման և հիշատակման ոլորտներում առաջընթացը հետևողական չի եղել: Ճշմարտության որոնման մասնագիտացված ինքնավար նախաձեռնություններ չեն իրականացվել՝ խորհրդային իշխանության տարիներին տեղի ունեցած խախտումները, հակամարտության որոշ դրվագները և 1991 թվականից ի վեր պետական չարաշահումները հետաքննելու և արձանագրելու համար: Այնուամենայնիվ, հակամարտության և պետական չարաշահումների վերաբերյալ որոշ հետաքննություններ իրականացվել են Ազգային ժողովի կողմից: Ես կոչ եմ անում իշխանություններին ստեղծել անկախ մեխանիզմ՝ այս հայտարարության մեջ նշված մարդու իրավունքների խախտումների տարբեր դեպքերը ուսումնասիրելու, արձանագրելու և դրանք ներկա և ապագա սերունդներին հասանելի դարձնելու նպատակով:

Չափից ավել ուժի կիրառման, խոշտանգումների, կասկածելի մահերի և կամայական կալանքի բազմաթիվ դեպքերի քրեական հետաքննությունը սակավ է եղել քաղաքական կամքի բացակայության, անարդյունավետ հետաքննության և վաղեմության ժամկետների կիրառման պատճառով, որոնք այժմ ներպետական օրենսդրությամբ օրենքից դուրս են ճանաչվել միջազգային հանցագործությունների համար: Ես կոչ եմ անում դատախազությանը և դատական մարմիններին անհապաղ ակտիվացնել ջանքերը՝ իրենց ազգային և միջազգային պարտավորությունները կատարելու և մարդու իրավունքների այդ խախտումների համար հաշվետվողականություն ապահովելու գործում:

[6] https://www.oecd-ilibrary.org/docserver/e56cafa9-en.pdf?expires=1700584250&id=id&accname=guest&checksum=A4074ABD724A7D7F286F7AB216A5B8FF, p.6

Հայաստանը չի ընդունել փոխհատուցման համապարփակ համակարգ: Այնուամենայնիվ, օրենսդրության կամ կառավարության որոշումների համաձայն փոխհատուցում է տրվել խորհրդային բռնաճնշումների զոհերին, հակամարտության ընթացքում զոհված կամ անաշխատունակ դարձած զինվորներին, հակամարտության քաղաքացիական զոհերին և 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի զոհերին: Մարդու իրավունքների խախտումների այլ զոհեր պայքարել են փոխհատուցում ստանալու համար: Կոչ եմ անում իշխանություններին ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և վարչական միջոցներ՝ ապահովելու, որ ապօրինի օտարումների, պետական բռնաճնշումների և չարաշահումների, ինչպես նաև իրավապահ մարմիններում կամ զինված ուժերում խոշտանգումների և կասկածելի մահվան դեպքերի զոհերին տրամադրվի մարդու իրավունքների ոտնահարման զոհերի հատուկ իրավական կարգավիճակ և համապատասխանաբար լիարժեք փոխհատուցում հատկացվի: Նախկինում կատարված պետական չարաշահումների համար հազվադեպ են հրապարակային ներողություն խնդրել, ինչը պետք է ավելի հաճախակի լինի:

Սույն հայտարարության մեջ նշված խախտումների վերաբերյալ հիշատակումը սահմանափակ է, բացառությամբ Ծիծեռնակաբերդի հանրահայտ հուշահամալիրի և պահանջում է ավելի մեծ հանձնառություն և ռեսուրսներ: Նման խախտումների մասին պատմության դասերը, որոնք նպատակ ունեն խթանելու քննադատական մտածողությունը և այսպիսի խնդիրների հանդեպ բազմակարծությունը՝ հիմնված օբյեկտիվ ակադեմիական տեղեկատվություն պարունակող դասագրքերի վրա, նույնպես պետք է ընդլայնվեն:

1995 թվականի սահմանադրության ընդունումից ի վեր Հայաստանն աստիճանաբար անցում է կատարում դեպի ժողովրդավարություն: Խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած պետականաշինության և կառույցների վերակազմավորման սկզբնական գործընթացը 2001թ.-ին Եվրախորհուրդ մուտք գործելուն զուգահեռ նպաստեց տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների և ներդրողների աջակցությամբ ձևավորվող ժողովրդավարական գործընթացների, ինստիտուտների և նորմերի հաստատմանը:

Առաջընթացը գծային չէր, և այս նորաստեղծ ինստիտուտները իրենց անկախության ճանապարհին բախվեցին հսկայական մարտահրավերների, ինչպիսիք են ընտրակեղծիքները, դատական համակարգի ոչ բավարար անկախությունը, պետական ինստիտուտների համատարած կոռուպցիան և անվտանգության ոլորտում ու զինված ուժերում բռնության չափից շատ կիրառումը: Այս խնդիրների մեծ մասը հանգեցրեց պետական ինստիտուտների տասնամյակներ տևող սոցիալական քննադատության, որն էլ հանգուցալուծվեց 2018 թվականի այսպես կոչված Թավշյա հեղափոխությամբ:

Նոր վարչակազմի կողմից մշակվել է բարեփոխումների նոր փաթեթ, որն ուղղված է արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի նվազեցմանը և պետական կառույցների գործընթացների և որոշումների թափանցիկության մակարդակի բարձրացմանը: Այնուամենայնիվ, այս ոլորտում առաջընթացը դանդաղում է մասամբ Քովիդ-19 համավարակի և Ադրբեջանի հետ հակամարտության վերսկսման և մասամբ էլ փոփոխություններն իրականացնելու կառավարության անբավարար ջանքերի պատճառով:

Բարձրագույն դատական խորհրդի ստեղծումը և դատավորների բարեվարքության ստուգման ընթացակարգերը, թեև շատ կարևոր են, սակայն, ըստ բազմաթիվ տվյալների, բավական չեն՝ պաշտպանելու դատական համակարգը քաղաքական միջամտությունից: Հաղորդվում է նաև Խորհրդի և Դատախազության նշանակումների և որոշումների ոչ թափանցիկ լինելու մասին: Կոչ եմ անում պատկան մարմիններին խորացնել բարեփոխումների գործընթացը՝ ապահովելու այս առաջնային ինստիտուտների արդյունավետ անկախացումը կոռուպցիայից և անհարկի քաղաքական ազդեցությունից:

Ժողովրդավարությունը և օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը այլ կերպ չեն կարող արդյունավետ իրականացվել: Կառավարությունը տարիների ընթացքում որոշ ոլորտային բարեփոխումներ է իրականացրել՝ բարձրացնելու անկախության ու վերահսկողության մակարդակը ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկներում և զինված ուժերում: Ոստիկանության բարեփոխումներն ուժեղացվել են 2018 թվականից՝ հավաստագրման գործընթացների ընդունմամբ:

Այնուամենայնիվ, այս փոփոխությունները բավարար չեն եղել և չեն կարողացել կանխել այս հաստատությունների կողմից իրականացվող մարդու իրավունքների խախտումները և ինչպես հարկն է քննել այդ դեպքերը: Իշխանություններին կոչ եմ անում շարունակել այս հաստատությունների բարեփոխումների գործընթացը, ստուգել և հավաստագրել բոլոր ուժային կառույցների պաշտոնյաներին և հաշվետվողականություն ապահովել չարաշահումների բոլոր դեպքերի համար՝ դրանց կրկնումը կանխելու համար:

Իմ ժամանումը Հայաստան համընկել է հակամարտության հետևանքով Լեռնային Ղարաբաղից 110.000 հայերի բռնի տեղահանման հետ: Փախստականներին ընդունող համայնքներում հանդիպել եմ իշխանությունների ներկայացուցիչների և փախստականների հետ, իսկ Երևանում ականատես եմ եղել տեղահանված բնակչության ցավին ու անհետաձգելի կարիքներին, ինչպես նաև իշխանությունների կողմից իրականացվող հսկայական աշխատանքին՝ հոգալու նրանց առաջնային և հրատապ կարիքները:

Օգտվելով առիթից՝ հայտնում եմ, որ ամուր կանգնած եմ Լեռնային Ղարաբաղի փախստականների կողքին և ողջունում եմ իշխանությունների՝ տուժածներին օգնելու հանձնառությունն ու ջանքերը: Փախստականներին տրամադրվում են առաջնային ծառայություններ, կացարան և ապրուստի միջոցներ: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այս խնդիրը ավելի կբարդանա: Միջնաժամկետ լուծումները պետք է գնահատվեն միջազգային հանրության աջակցությամբ և խորհուրդներով. կարծում եմ, որ այդպես էլ լինում է:

Պետք է դյուրացվեն գրանցման մեխանիզմները՝ ապահովելու աշխատանքի և ծառայությունների անխոչընդոտ հասանելիությունը՝ անկախ փախստականների քաղաքացիության կարգավիճակից՝ կանխելու անսպասելի խոչընդոտներն այս առումով: Բացի այս առաջնային կարիքներից, փախստականները նշել են Լեռնային Ղարաբաղում մնացած գրանցման և այլ փաստաթղթերի պահպանության և հասանելիության հարցը, ինչպես նաև այդ տարածքներում իրենց գերեզմանոցների և մշակութային ժառանգության պահպանության հրատապ անհրաժեշտությունը:

Կոչ եմ անում խաղաղության բանակցության կողմերին և այս գործընթացին առնչվող միջազգային հանրության անդամներին դիտարկել այս նյութական և ոչ նյութական ժառանգությունը պահպանելու մեխանիզմներ, նախատեսել ճշմարտության, արդարադատություն, հաշվետվողականություն մեխանիզմների ներդրում (ներառյալ անհետ կորածների և փաստերի որոնման գործընթացի դյուրացումը), հակամարտության ռազմագերիների և տեղահանվածների վերադարձ և տուժածների փոխհատուցում՝ ազդակիր բնակչության և զոհերի հետ խորհրդակցելով:

Նման մեխանիզմներ պետք է ստեղծվեն միջազգային հանրության հովանու ներքո՝ ապահովելու բոլոր կողմերի անաչառությունն ու վստահությունը, ինչպես նաև կանխելու բռնության կրկնումը: Անցումային արդարադատության միջազգային չափանիշները պետք է արտացոլվեն ապագա բոլոր համաձայնագրերում: